2. Բնակելի տուն՝ $169.1 \times 0,1028 \times 10000 = 173840$ / մեկ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ,

կիսանկուղ՝ $16,8 \times 0,1028 \times 10000 = 17270$ /տասնյոթ հազար երկու հարյուր
յոթանասուն/ ՀՀ դրամ,

պարիսպ՝ $0,5 \times 0,1028 \times 6000 = 310$ /երեք հարյուր տաս/ ՀՀ դրամ:

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 191420 / մեկ հարյուր իննսունմեկ հազար
չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը
60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407
հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. 2015 թվականին ինքնական կառուցված 3,8 քմ արտաքին մակերեսով չուլանը
համարել որպես ինքնական կառուցված շինություն:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի
Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական
ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Ռաֆիկի Սարգսյանին որոշման ընդունման
մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հուլիսի 08
ք. Մեծամոր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2026 թվականի N 1676-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Պարգև Վարդանի Եղիազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրում Պարգև Վարդանի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04302HPHNDTT, կադ. ծածկագիր՝ 04-093-0028-0003/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Տարոնիկ բնակավայր, Ն. Եղիազարյան փողոց, 11 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարգև Վարդանի Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2026 թվականի N 1675-Ա

ՔԱՂԱՔԱՅԻ ԳՆԵԼ ՄԱԿԱՐԻ ԵՍԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Գնել Մակարի Եսայանի դիմումը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


- Մեծամոր համայնքի Արագափ բնակավայրում Գնել Մակարի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 040624C2X6HH, կադ. ծածկագիր՝ 04-015-0013-0006, 0.19հա մակերեսով և կադ. ծածկագիր՝ 04-015-0013-0005, 0.132 հա մակերեսով, տրամադրել գույքի միավորումից առաջացող հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Արագափ բնակավայր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 8-10 հողամաս:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գնել Մակարի Եսայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գնել Մակարի Եսայան

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2026 թվականի N 1674-Ա

ՎԱՐԴԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վարդան Արմենակի Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամաս, 3-րդ փողոց, 22 հողամաս հասցեում գտնվող՝ Վարդան Արմենակի Վարդանյանին /ծնված՝ 04.10.1964թ./ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-003-0011-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 1998 թվականին ինքնակամ կառուցված 41,1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 1998 թվականին ինքնակամ կառուցված 90.3 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը՝ համաձայն «Ռաֆայել Մարգարյան Նորայրի» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի՝ ծածկագիր 2026M24JYY:

2. Բնակելի տուն՝ $41,1 \times 0,1673 \times 10000 = 68760$ / վաթսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ,

Օժանդակ շինություն՝ $90,3 \times 0,1673 \times 6000 = 90640$ / ինսուն հազար վեց հարյուր քառասուն/ ՀՀ դրամ,

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 159400 / մեկ հարյուր հիսունինը հազար չորս հարյուր / ՀՀ դրամ:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:


4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Արմենակի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հուլիսի 08
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1673-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՐԵԳԻՆ ԿՈԼՅԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժինների աշխատակիցների կողմից 2026 թվականի հունիսի 29-ին շրջայց է իրականացվել Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասում, որտեղ գտնվող հանրակացարանի մասնաշենքի հարևանությամբ տեղակայված ավտոտնակների դիմաց հայտնաբերվել է խոշոր եզրաչափի աղբ, որը աղբավայրերից դուրս կուտակել է Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 4/22 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Գարեգին Կոլյայի Մարտիրոսյանը, ում զգուշացվել էր կուտակված աղբը հավաքելու և աղբավայր տեղափոխելու համար, սակայն վերջինս աղբը չի հավաքել, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով նախատեսված արարք է:

Նշված դեպքով կազմվել է համապատասխան արձանագրություն: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Մեծամորի համայնքապետարանի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովի կողմից /այսուհետ՝ Հանձնաժողով/ 2026 թվականի հունիսի 30-ին հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակում 2026 թվականի հուլիսի 07-ին ժամը 12:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գարեգին Կոլյայի Մարտիրոսյանը /ստացական՝ LO134204929AM/, փոստային անդորրագրի հետադարձ ծանուցումը՝ 04.07.2026թ.-ին պատշաճ ծանուցված լինելու մասին՝ Գարեգին Կոլյայի Մարտիրոսյանի ստորագրությամբ Հանձնաժողովը ստացել էր 2026 թվականի հուլիսի 04-ին: Քաղաքացի Գարեգին

Կոլլայի Մարտիրոսյանը պատշաճ ծանուցված լինելով չի ներկայացել 2026 թվականի հուլիսի 07-ին, ժամը 12:00-ին նշանակված վարչական վարույթով գործի լսմանը:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժինների աշխատակիցների կողմից 2026 թվականի հունիսի 29-ին կազմված արձանագրության համաձայն, շրջայց է իրականացվել Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասում, որտեղ գտնվող հանրակացարանի մասնաշենքի հարևանությամբ տեղակայված ավտոտնակների դիմաց հայտնաբերվել է խոշոր եզրաչափի աղբ, որը աղբավայրերից դուրս կուտակել է Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 4/22 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Գարեգին Կոլլայի Մարտիրոսյանը: Վերջինիս զգուշացվել էր կուտակված աղբը հավաքելու և աղբավայր տեղափոխելու համար, սակայն Գարեգին Կոլլայի Մարտիրոսյանը աղբը չի հավաքել, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով նախատեսված արարք է:

Փաստորեն քաղաքացի Գարեգին Կոլլայի Մարտիրոսյանը Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասում գտնվող հանրակացարանի մասնաշենքի հարևանությամբ տեղակայված ավտոտնակների դիմաց կուտակել է խոշոր եզրաչափի աղբ և զգուշացումներից հետո չի հավաքել աղբը և տեղափոխել աղբավայր՝ խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված դրույթները:

3.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության

կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբի հավաքման կենտրոններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս՝ խոշոր եզրաչափի աղբ (երկու և ավելի քառակուսի մետր զբաղեցնող խոշոր կենցաղային և ոչ կենցաղային սարքավորումներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ կամ այլ նմանատիպ իրեր) թափելն առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրիկսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219¹-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին, նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածով, 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և 219¹-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի «բ», 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացի Գարեգին Կոլյայի Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ


կետով նախատեսված իրավախախտում կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900335239373 հաշվեհամարին՝ ստացող Մեծամորի համայնքապետարան:
3. Քաղաքացի Գարեգին Կոլյայի Մարտիրոսյանին տալ պարտադիր ցուցում՝ օրենքով սահմանված վերացնել վարչական իրավախախտման հետևանքները:
4. Պարզաբանել նաև, որ սույն որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Մեծամոր համայնքի ղեկավարին կամ Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1672-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՐՎԵՆՏ ՎԱԼՈՂՅԱԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Լարվենտ Վալոդյաի Ասատրյանի դիմումը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում Լարվենտ Վալոդյաի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04312ZBRBBBX, կադ. ծածկագիր՝ 04-095-0045-0021/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Փշատավան բնակավայր, 10-րդ փողոց, 5 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լարվենտ Վալոդյաի Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հուլիսի 07
ք.Մեծամոր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1671-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏԻ ԶԱՂԱՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Սմբատի Զաղարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում Արման Սմբատի Զաղարյանին ժառանգության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04312LSU9FET, կադ. ծածկագիր՝ 04-095-0039-0009/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Փշատավան բնակավայր, 3-րդ փողոց, 1 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Սմբատի Զաղարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հուլիսի 07
ք.Մեծամոր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1670-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶԱՏ ՍԻՄՈՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ ՆԹ-10267-25
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ /ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ/ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 53-րդ, 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Ազատ Սիմոնի Ալեքսանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել քաղաքացի Ազատ Սամվելի Կարապետյանին տրամադրված՝ թիվ ՆԹ-10267-25 /հսկիչ համար՝ PM72-D2EB-FIAA-6397/ նախագծման թույլտվությունը /ճարտարապետահաճատակագծային առաջադրանքը/:
2. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման մասին տեղեկատվության մուտքագրումը քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների համակարգ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին պատշաճ կարգով հանձնելու /ծանուցելու/ հաջորդ օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Մեծամոր համայնքի ղեկավարին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1669-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ԽՈՐԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Խորենի Գրիգորյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում Աշոտ Խորենի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04011TWNMGNP, կադ. ծածկագիր՝ 04-003-0037-0004/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Մեծամոր քաղաք, Ազատամարտիկների փողոց, 22/1 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Խորենի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հուլիսի 7
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 1668-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N15-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի հերթական ատեստավորման հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության ատեստավորում անցկացնելու համար ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
- Սահմանել, որ համայնքային ծառայության ատեստավորումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԵՅԱՆ





ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքի նախագահի 2026 թվականի հունիսի 7-ի N 1668-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն,	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Գևորգ Սպարտակի Գևորգյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ
2	Գայանե Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ
3	Հովհաննես Մկրտչյան	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ	Մեծամորի համայնքապետարան
4	Գևորգ Խաչատրյան	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ	Մեծամորի համայնքապետարան
5	Գայանե Թումանյան	Մեծամոր համայնքի «Մեծամորի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	Մեծամոր համայնքի «Մեծամորի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
6	Տատյանա Դոբրոյան	Մեծամոր համայնքի ավագանու անդամ	Մեծամոր համայնքի ավագանի

Աշխատակազմի քարտուղար՝

Մ.Հովհաննիսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2026 թվականի N 1667-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ՀՈՒՓՄԻՄԵ ԳԱԼՈՒՍՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Հռիփսիմե Գալուստի Գասպարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում Հռիփսիմե Գալուստի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04142DZSLDMQ, 04-039-0020-0042-ից կադաստրային ծածկագրով, 0,50039 հա մակերեսով, առանձնացվող հատված 1/ տրամադրել գույքի բաժանումից առաջացող հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Եղեգնուտ բնակավայր, Կենտրոնական փողոց, 1-ին փակուղի, 19 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հռիփսիմե Գալուստի Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2026 թվականի N 1666-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՒՓՍԻՄԵ ԳԱԼՈՒՍՏԻ ԳԱՄՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Հռիփսիմե Գալուստի Գասպարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում Հռիփսիմե Գալուստի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04142SUJUK4D, 04-039-0020-0042-ից կադաստրային ծածկագրով՝ 0,1 հա մակերեսով, առանձնացվող հատված 2/ տրամադրել գույքի բաժանումից առաջացող հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Եղեգնուտ բնակավայր, Կենտրոնական փողոց, 1-ին փակուղի, 19/2 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հռիփսիմե Գալուստի Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հուլիսի 6
ք.Մեծամոր